

OD 75-12 L

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ խորհրդի  
« 02 » ապրիլի 2010թ.

թիվ 37L\_ որոշմամբ  
Խորհրդի նախագահ՝  
ԿԱՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ



«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ԿԱՐԳ



**1. ՆՊԱՏԱԿ**

Սույն կարգի նպատակն է սահմանել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ կողմից բրոքերային ծառայությունների մատուցման գործընթացը և պայմանները:

**2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

Սույն կարգ կիրառվում է բրոքերային ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված՝ Բանկի աշխատակիցների կողմից:

**3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

- ISO 9001:2000,

**4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

«Բանկ»՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ

«բրոքերային ծառայություն»՝ Բանկի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների իրականացման ծառայության մատուցում,

«հաճախորդ»՝ ցանկացած ֆիզիկական (այդ թվում անհատ ձեռնարկատեր) կամ իրավաբանական անձ, որը Բանկի հետ ունի կնքված բրոքերային ծառայություն մատուցելու պայմանագիր կամ պատրաստակամություն է հայտնել նման պայմանագիր կնքելու համար,

«Պատվեր»՝ բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում արժեթղթերով գործարք կատարելու նպատակով ներկայացվող հաճախորդի հանձնարարականը,

«պրոֆեսիոնալ հաճախորդ»՝ որակավորված ներդրող համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի,

«ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ»՝ չորակավորված ներդրող կամ պրոֆեսիոնալ հաճախորդ չհամարվող անձ,

«բրոքերային հաշիվ»՝ բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են հաճախորդի այն միջոցները, որոնք հաճախորդը մտադիր է օգտագործել բրոքերային ծառայություններից օգտվելու ժամանակ,

«ղեկո հաշիվ»՝ արժեթղթերի հաշվառման հաշիվ:

**5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

**7. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**7.1. Ընդհանուր դրույթներ**

7.1.1. Բանկում բրոքերային ծառայությունները մատուցվում են սույն կարգի և սույն կարգի հիման վրա ընդունված ընթացակարգերով սահմանված եղանակով:

**7.2. Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում**

7.2.1. Բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով Բանկի և Հաճախորդի միջև կնքվում է բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր:

7.2.2. Բանկը պարտավոր է բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած յուրաքանչյուր հաճախորդին մատուցել բրոքերային ծառայություններ՝ սույն կարգի և սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգերի համաձայն:

7.2.3. Բանկն իրավուք չունի բրոքերային ծառայություններ մատուցել Հաճախորդին՝ առանց բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման:

7.2.4. Բրոքերային ծառայությունների մատուցման նպատակով Բանկը հաճախորդների համաձայնությամբ վերջիններիս դասակարգում է պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ:

**7.3. Բրոքերային հաշիվների բացումը, վարումը և փակումը**

7.3.1. Բանկի հետ բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած յուրաքանչյուր հաճախորդի համար բացվում է առանձին բրոքերային հաշիվ:



7.3.2. Բրոքերային հաշվի բացումը, վարումը և փակումը կատարվում է Կենտրոնական հաշվապահության կողմից՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով (ընթացակարգերով) սահմանված կարգով:

7.3.3. Բրոքերային հաշիվը չի հանդիսանում բանկային հաշիվ և դրա մնացորդների նկատմամբ տոկոսներ չեն հաշվարկվում:

7.3.4. Գրամական միջոցների մուտքագրումը բրոքերային հաշվին կարող է իրականացվել միայն անկանխիկ եղանակով:

7.3.5. Բրոքերային ծառայությունների մատուցման գործարքներն իրականացվում են հաճախորդի՝ բրոքերային և դեպո հաշվին մուտքագրված միջոցներով:

7.3.6. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած աշխատանքային օր տեղեկանալ իր բրոքերային հաշվին առկա միջոցների մասին:

7.3.7. Հաճախորդի բրոքերային հաշիվը փակվում է բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման դեպքում:

**7.4. Պատվերների ընդունումը և իրականացումը**

7.4.1. Հաճախորդը բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում կարող է Բանկին ներկայացնել գործարքի կնքման պատվեր թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգով (ընթացակարգերով) սահմանված ձևով:

7.4.2. Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի պատասխանատու աշխատակիցը պարտավոր է ընդունել Հաճախորդի ներկայացրած պատվերները համաձայն սույն կարգի հիման վրա ընդունված ընթացակարգի (ընթացակարգերի):

7.4.3. Հաճախորդի պատվերն ընդունում և կատարում է Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի պատասխանատու աշխատակիցը՝ համաձայն պատվերում ներկայացված պայմանների:

7.4.4. Պատվերների կատարումը Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի պատասխանատու աշխատակցի կողմից կատարվում է անկողմնակալ՝ Բանկի նմանատիպ գործառնություններ իրականացնելիս նախապատվություն տալով Հաճախորդի պատվերին:

7.4.5. Պատվերները Բանկում իրականացվում են հաճախորդի կողմից տրված հանձնարարականում արտացոլված պահանջներին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կողմից հաճախորդի պատվերից շեղումը կատարվում է հօգուտ հաճախորդի:

7.4.6. Այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարվում են ըստ դրանց ստացման հաջորդականության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դրանք անհնարին է դարձնում:

7.4.7. Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի պատասխանատու աշխատակիցը պարտավոր է հաճախորդին անհապաղ տեղյակ պահել այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:


7.4.8. Պատվերի կատարման, չկատարման կամ մասնակի կատարման դեպքում Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի պատասխանատու աշխատակիցը պարտավոր է տեղեկացնել Հաճախորդին ներկայացված պատվերի կատարման, չկատարման կամ մասնակի կատարման մասին՝ սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգերով սահմանված դրույթների համաձայն:

**7.5. Բրոքերային գործառնությունների վերաբերյալ գրանցամատյանների վարումը**

7.5.1. Բանկը վարում է բրոքերային գործառնությունների վերաբերյալ գրանցամատյան: Գրանցամատյանի վարումն իրականացնում է Բանկային գործառնությունների և դրամական հոսքերի կառավարման դեպարտամենտի կողմից:

7.5.2. Գրանցումները վարվում են Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասով:

7.5.3. Գրանցամատյանը պահպանվում է էլեկտրոնային եղանակով և պետք է պաշտպանված լինի համապատասխան գաղտնաբառով:

	OD 75-12	Էջ 4 / 1
	Բրոքերային ծառայությունների մատուցման կարգ	Խնդրագրություն: 01
		Սնաքիվ: «21» հունիսի 2010թ.

7.5.4. Կենտրոնական բանկի պահանջով գրանցամատյանում կատարված գրանցումները պետք է հասանելի և մատչելի լինեն Կենտրոնական բանկին և պետք է հնարավոր լինի վերծանել կատարված յուրաքանչյուր գործարքի յուրաքանչյուր փուլը:

7.5.5. Եթե գրանցամատյանում փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում, ապա դրանք պետք է կատարվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի պարզել այդ գրանցումների սկզբնական բովանդակությունը և յուրաքանչյուր փոփոխությունը կամ լրացումը և պետք է բացառվի երրորդ անձանց կողմից այդ գրանցումների չթույլատրված օգտագործումը:

7.5.6. Գրանցամատյանում գրանցումների կատարման կարգը սահմանված է սույն կարգի հիման վրա ընդունված համապատասխան ընթացակարգերով: